Զ.

ՊԱՊԱՔ ՅԵՎ ԱՄԻՐ-ՀԱՍԱՆ Ա.

Նախընթաց գլխի մեջ տեսանք, թե Պռոշի և Խութլու Խաթունի վորդիքն եյին Պապաք, Ամիր-Հասան, Վասակ, Մկդեմ և դուստրը Գոհար Խաթուն. վերջին յերկուսը վախճանված եյին Գեղարդի պահարանի արձանագրությունից՝ 1268 թ. առաջ, իսկ Վասակ 1268 -- 1273 թ.թ. մեջ։ Պռոշի մահվանից հետո նորա իշխանության անմիջական ժառանգներն եյին, ուրեմն, Պապաք և Ամիր-Հասան յեղբայրները, առաջինն իբրև ավագ իշխանապետության իրավունքով։ Այս իրողությունը հաստատվում է վոչ միայն ժամանակի ժառանգական իրավունքով*, այլ և աղբյուրների ցուցմամբ. ամեն անգամ հոր կենդանության կամ մահվանից հետո՝ հիշատակվում է նախ Պապաքի և ապա Ամիր-Հասանի անունը. այսպես եր Գեղարդի պահարանի արձանագրության մեջ 1268 թվին, Թանատի շինության արձանագրության մեջ 1273թվին (եջ 117). նույնը կտեսնենք և այսուհետև մեջ բերվելիք հիշատակարանների և արձանագրությունների մեջ։ Հոր մահվանից անմիջապես հետո առաջին հիշատակությունը տեսնում ենք մի ավետարանի հիշատակարանի մեջ[1], վոր գրված է 1284 թվին Թանատի վանքում։ Ստացողն է Վարդան վարդապետ «սնել եւ վարժել ի սբ ուխտիս, որ կոչի Արատէս, առ ոտս ածաղարդ բարբունոյ Հայրապետի նորոգիչ եկեղեցոյ և սիրող սրբութեա»։ Այնտեղից անցել և բնակվել է «ի մենաստանիս, որ կոչի Գնդեվանս», և գծագրել տվել «զսա ի թուա-



Վերին Ախտայում, արծիվ մագիլների մեջ խոյ. **Պատկեր 51.**

բերութեա Հայոց, որ էր ՉԼԳ. ի հայրապետութեա հոյ տն Յակոբայ և յարտի եպսկ այսմ նահանգի տր Սարգսի գիտնականի, յիշխանութեա բարեպաշտ Պապաքին եւ ի տերութեա այսմ մենաստանի պատրոն Դաւթի և ամու-

---

* Տես Х. В. 1913. Т. II. вып. II. 225. Գող Մխիթար. Դատաստ. յեր. 300։

1 Տ. Աւետիսեանի Ն. Զուղայի Ցուց. № 34 (=35 վանքի ցուց.)։ Ձեռագիրը աւետարան է, թուղթ, բոլորգիր, ըստ ցուցակագրողի, «թէ գրութիւնը և թէ նկարները գեղեցիկ օրինակ դարող են ծառայել այն շրջանի արուեստի»։ «Ունի բամբիռ խորաններ, զարդանկարներ, լուսանցազարդեր», Մատթէոս ավետարանչի պատկերի տակ գրված է «Ծաղկող Յովանէս վրդ.»։ Տես Հավել. Բ. 17։